Հաստատված է նոր խմբագրությամբ
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Haik Yeganyan

Digitally signed by Haik Yeganyan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=Armenia Securities Exchange OJSC, email=info@amx.am, cn=Haik Yeganyan
Date: 2019.01.25 17:09:47 +04'00'

«17» հունվարի, 2019թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/081L

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

_____

«___» _____ 2019թ.

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2019.02.12 16:08:05 AMT
Reason: Գրանցված է 08.02.19թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Գլուխ 1. Հասկացություններ

1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
2) **«Ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի մասնակից».** այն բանկերը, որոնք Օպերատորի հետ ունեն առևտրին մասնակցության վերաբերյալ գործող պայմանագիր և որոնց Օպերատորի կանոններին համապատասխան թույլատրվել է մասնակցելու ժամկետային վարկային ռեսուրսներով Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին:
3) **«Լոտ».** ժամկետային վարկային ռեսուրսի գնման կամ վաճառքի հայտում նշվող՝ ՀՀ դրամով արտահայտված վարկային ռեսուրսի մեկ անվանական միավորին համարժեք քանակական չափման նվազագույն միավոր:
4) **«Սպրեդ».** ժամկետային վարկային ռեսուրսի գնման և վաճառքի լավագույն գնի նկատմամբ առևտրային համակարգ մուտքագրվող հայտերի գների տարբերության առավելագույն թույլատրելի սահման:
5) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Ժամկետային վարկային պայմանագրի կնքումը

1) Օպերատորի առևտրային համակարգում ժամկետային վարկային պայմանագրեր (ժամկետային վարկային ռեսուրսներով գործարքներ) կարող են կնքվել առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում՝ Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններով» և սույն գլխով սահմանված կարգով:
2) Ժամկետային վարկային պայմանագրերի առևտուրը Օպերատորը երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպում է իր ժամկետային վարկային ռեսուրսների հարթակում:
3) Վարկային ռեսուրսներով կնքվող գործարքները դիլերային գործարքներ են և կարող են կնքվել միայն վարկային ռեսուրսների շուկայի մասնակցի անունից և հաշվին:
4) Օպերատորը ժամկետային վարկային ռեսուրսներով առևտուրը կազմակերպում է լրիվ նախնական դեպոնացման առևտրի նմանությամբ՝ սույն գլխի 5) – 10) կետերում սահմանված առանձնահատկություններով:
5) Ժամկետային վարկային ռեսուրսների գնման (վաճառքի) հայտերում որպես հայտի գին նշվում է ձեռքբերվող (տրամադրվող) վարկի տարեկան տոկոսադրույքը, որի հիման վրա վարկառուի կողմից վարկատուին վճարվելիք տոկոսագումարի չափը հաշվարկվում է C*Y*T/36500 կամ C*Y*T/36600 (կախված գործարքի կնքման օրվանից մինչև հաջորդ տարվա նույն օրը,իսկ փետրվարի 29-ին կնքված գործարքի դեպքում մինչև հաջորդ տարվա փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում օրերի քանակից) բանաձևով, որտեղ C-ն տրամադրվող վարկի գումարն է, Y-ը՝ վարկի տարեկան տոկոսադրույքը, իսկ T-ն՝ վարկի տրամադրման և մարման օրերի միջև ընկած օրացուցային օրերի քանակը: Տոկոսագումարը կլորացվում է 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) ՀՀ դրամի ճշտությամբ:
6) Ժամկետային վարկային ռեսուրսների ձեռքբերման համար դրամային միջոցների դեպոնացում չի պահանջվում: Փոխարենը Օպերատորի «Ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններին» համապատասխան վարկային ռեսուրսների շուկայի մասնակիցներին տրամադրվում են ժամկետային վարկային ռեսուրսների ձեռքբերման սահմանաչափեր:

7) Ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի մասնակիցները ժամկետային վարկային ռեսուրսներ կարող են ձեռքբերել միայն վերջիններիս տրամադրված համապատասխան սահմանաչափերի սահմաններում:
8) Ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի «Ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններին» համապատասխան կատարված լրացուցիչ դեպոնացումների դեպքում համապատասխան չափով ավելացվում են դեպոնացված ժամկետային վարկային ռեսուրսների մնացորդները:
9) Առևտրի մասնակիցը կարող է իր տերմինալից (հեռացված տերմինալից) ամբողջությամբ կամ մասնակի ապադեպոնացնել (ազատել) ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի տվյալ մասնակցի դեպոնացված՝ ժամկետային վարկային ռեսուրսների ձեռքբերման սահմանաչափի և/կամ ժամկետային վարկային ռեսուրսների՝ առևտրային համակարգում տվյալ պահին առկա և ազատ (չարգելադրված) մնացորդը կամ դրա մի մասը, որի դեպքում ապադեպոնացված միջոցների չափով նվազեցվում է ժամկետային վարկային ռեսուրսների ձեռքբերման սահմանաչափի կամ դեպոնացված վարկային ռեսուրսի մնացորդը: Առևտրի մասնակցի կողմից ապադեպոնացված միջոցների հետ կապված հետագա գործառնություններն իրականացվում են Օպերատորի «Ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններին» համապատասխան:
10) Օպերատորի կանոնների համաձայն միաժամանակ ժամկետային վարկային ռեսուրսների, լրիվ նախնական դեպոնացմամբ կազմակերպվող արտարժույթի և/կամ պետական պարտատոմսերի առևտրին մասնակցելու իրավունք ունեցող կազմակերպությունների դեպոնացված դրամային միջոցների մնացորդները կարող են փոփոխվել նաև արտարժույթի և/կամ պետական պարտատոմսերի առևտրի ընթացքում ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից մուտքագրված հայտերի և կնքված գործարքների արդյունքում՝ Օպերատորի կանոններով սահմանված կարգով:
11) Առևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող՝ ժամկետային վարկային ռեսուրսի գնման (վաճառքի) հայտում գինը նշվում է ստորակետից հետո 2 (երկու) նիշի ճշտությամբ, իսկ լոտերի քանակը պետք է բազմապատիկ լինի տաս միլիոնին:
12) Առևտրային համակարգի կողմից չեն ընդունվում և առևտրային համակարգում չեն գրանցվում ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի տվյալ մասնակցի անունից ներկայացված հայտին ժամկետային վարկային ռեսուրսների շուկայի նույն մասնակցի անունից ներկայացվող համապատասխան հանդիպակաց հայտերը, իսկ առևտրային նստաշրջանի ընթացքում՝ նաև առևտրի մասնակցի կողմից ներկայացված՝ տաս միլիոնին ոչ բազմապատիկ թվով լոտեր պարունակող հայտերը:
13) Տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հետառևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:
14) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող հայտում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
    ա) ժամկետային վարկային ռեսուրսի հապավումը, որը նշում է պարունակում վարկի ժամկետայնության (օրացուցային օրերով) մասին,
    բ) հայտի տեսակը՝ գնման կամ վաճառքի,
    գ) լոտերի քանակը,
    դ) հայտի բավարարման ժամանակային պայմանը՝ պահել հերթում կամ հանել մնացորդը:
15) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող բոլոր հայտերը մասնակի բավարարմամբ, անմիջապես ակտիվացվող և լիմիտային հայտեր են, որոնցում նշվող գինը հավասար է ժամկետային վարկային տվյալ ռեսուրսով տվյալ հետառևտրային նստաշրջանին նախորդած առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված բոլոր

գործարքների միջին կշռված գնին: Եթե տվյալ հետառևտրային նստաշրջանին նախորդած առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ ժամկետային վարկային ռեսուրսով գործարք չի կնքվել, ապա գործարք չի կարող կնքվել նաև տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում:

16) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ նույն ժամկետային վարկային ռեսուրսի գնման և վաճառքի հայտերն ընդգրկվում են երկու առանձին Հերթերում՝ ըստ առևտրային համակարգում դրանց գրանցման ժամանակային առաջնահերթության:
17) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրվող ցանկացած հայտին Հերթում հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում առևտրային համակարգում գրանցվում է վարկային գործարքի (գործարքների) կնքում:
18) Եթե հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացված հայտն առևտրային համակարգ մուտքագրվելու պահին Հերթում առկա հանդիպակաց բոլոր հայտերով բավարարվելուց (գործարքների կնքումից) հետո այնուամենայնիվ բավարարվում է մասամբ, ապա մնացորդը (հայտի չբավարարված մասը) ընդգրկվում է Հերթում սույն գլխի 16) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
19) Եթե հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող հայտին հանդիպակաց հայտեր Հերթում չկան, ապա այն ընդգրկվում է Հերթում սույն գլխի 16) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
20) Տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հաջորդ առևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:

Գլուխ 3. Սպրեդ

1) Երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով ժամկետային վարկային ռեսուրսներով կազմակերպվող առևտրի համար սպրեդը լավագույն հայտի գնի նկատմամբ սահմանվում է առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ պահին հայտերի համապատասխան հերթում ընդգրկված վաճառքի (գնման) լավագույն գնի ±10 տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում այն հայտերը, որոնցում նշված մեկ լոտի գինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված գնման լավագույն գնի համեմատ պակաս է 10-ից ավելի տոկոսով կամ վաճառքի լավագույն գնի համեմատ ավել է 10-ից ավելի տոկոսով:
2) Հասցեական գործարքների դեպքում ժամկետային վարկային ռեսուրսներով կազմակերպվող առևտրի համար սպրեդը լավագույն հայտի գնի նկատմամբ սահմանվում է տվյալ պահին երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով տվյալ ժամկետային վարկային ռեսուրսով ներկայացված լավագույն հայտերի գների ±10 տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում այն հասցեական հայտերը, որոնցում նշված մեկ լոտի գինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված գնման (վաճառքի) լավագույն գնի համեմատ պակաս (ավել) է 10-ից ավելի տոկոսով:

Գլուխ 4. Ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների կատարումը

1) Ժամկետային վարկային ռեսուրսներով առևտրային համակարգում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների և պահանջների որոշումը, հաշվանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումն ու վերջնահաշվարկի կատարումն իրականացվում է գործարքի կնքման օրը, իսկ մարումը Օպերատորի «Ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով» սահմանված կարգով կատարվում է T+S օրը, որտեղ T-ն գործարքի կնքման օրն է, իսկ S-ը՝ գործարքի ժամկետայնությունը՝ օրացուցային օրերով:: Ընդ որում, եթե ժամկետային վարկային պայմանագրի ժամկետայնությամբ պայմանավորված դրա մարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա գործարքը մարվում է տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Համապատասխանաբար վերահաշվարկվում է նաև տոկոսագումարը՝ վարկի փաստացի օրերի ժամկետով:
2) Վարկային ռեսուրսների շուկայի մասնակիցները, որոնց կազմում կամ անունից հանդես են գալիս գործարք կնքած առևտրի մասնակիցները, պարտավոր են Օպերատորին վճարել Օպերատորի «Սակագների մասին կանոններով» սահմանված համապատասխան միջնորդավճարները:

Գլուխ 5. Կանոններում փոփոխությունները և լրացումները

1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: